ՀՀ ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՍԱՐՔԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՔԾ-ԳՀԾՁԲ-ՀՍՊ-21/1-1

ք. Երևան « 12 » հունվարի 2021թ.

ՀՀ հատուկ քննչական ծառայությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Գ. Մկրտչյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Անուշ Պետրոսյան» ԱՁ-ն ի դեմս տնօրեն Անուշ Պետրոսյանի, (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուի

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

ղիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով ործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 4 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 1200000 (մեկ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 ռացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս

Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է **4** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ հատուկ քննչական ծառայություն	**Անուշ Պետրոսյան Ա/Ձ**
ք.Երևան, Վ.Վաղարշյան 13ա	**ք. Երևան, Արշակունյաց 5**
Ֆին.նախ.գործառնական վարչություն	**«Ամերիաբանկ» ՓԲԸ**
Հ/Հ900011474286	**Հ/Հ 1570004526880100**
ՀՎՀՀ 02589128	**ՀՎՀՀ 49557658**
Գլխավոր քարտուղար՝	
Գ. Մկրտչյան	
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«12» հունվարի 2021թ. կնքված
ՀԲԾ-ԳՀԾՁԲ-ՀՍՊ-21/1-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգմա ն (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանու ր գինը/ՀՀ դրամ	ընդհանու ր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը**
1	50311120/505	Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ	դրամ	1200000	1	ՀՀ, ք. Երևան, Վ.Վաղարշյան 13ա	*ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*
*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

ԳՆԱՑՈՒՑԱԿ

Համակարգչային սարքավորումների սպասարկման ծառայություններ	Միավոր գին /ՀՀ դրամ/
Համակարգչի	
Սնուցման բլոկի վերանորոգում	1490
Սնուցման բլոկի փոխարինում / 550վտ-650վտ / ներառյալ սնուցման բլոկը 550վտ-650վտ	5213
CPU-ի փոխարինում ներառյալ CPU Intel core i5	59580
CPU-ի փոխարինում ներառյալ CPU Intel core i3	37238
CPU-ի փոխարինում ներառյալ CPU Intel core i7	111720
CPU-ի հովացուցիչի փոխարինում ներառյալ հովացուցիչը	2606
Համակարգչի մայրական տպասալի նորոգում	7448
Համակարգչի մայրական տպասալի փոխարինում /ներառյալ մայր պլատան/	18619
RAM փոխարինում ներառյալ ԴԴՌ2 1024Մբ 667/800ՄՀՑ (DDR2 1024Mb 667/800MHZ)	2606
RAM փոխարինում ներառյալ ԴԴՌ2 2048Մբ 667/800ՄՀՑ (DDR2 2048Mb 667/800MHZ)	4469

RAM փոխարինում ներառյալ ԴԴՌ3 2048Մբ 1600ՄՀՑ (DDR3 2048Mb 1600MHZ)	3351
RAM փոխարինում ներառյալ ԴԴՌ3 4096Մբ 1600ՄՀՑ (DDR3 4096Mb 1600MHZ)	6702
RAM փոխարինում ներառյալ ԴԴՌ4 8 Գբ 2666ՄՀՑ (DDR4 8GB 2666Mhz)	14150
RAM փոխարինում ներառյալ ԴԴՌ4 16 Գբ 2666ՄՀՑ (DDR4 16GB 2666Mhz)	25322
HDD փոխարինում ներառյալ 500ԳԲ, 7200ռպմ,SATA	16385
HDD փոխարինում ներառյալ 1Տբ, 7200ռպմ,SATA	19364
500-512 GB M2 SSD-ի փոխարինում նորով Ներառյալ 500-512 GB M2 SSD-ն	35749
DVD-RW փոխարինում ներառյալ ԴՎԴ-ՌՎ(DVD-RW), կամ համարժեքը	5958
Ցանցային քարտի տեղադրում /ներառյալ ցանցային քարտը/	2234
Անխափան սնուցման սարք	
Ղեկավարման պլատայի վերանորոգում	4469
Մարտկոցի փոխարինում, ներառյալ մարտկոցը (12V-7.5 Ah)	6330
Մարտկոցի փոխարինում, ներառյալ մարտկոցը (12V-5 Ah)	5586
Մարտկոցի փոխարինում, ներառյալ մարտկոցը (12V-9 Ah)	7448
Մարտկոցի փոխարինում, ներառյալ մարտկոցը (12V-17 Ah)	10427
Մոնիտոր	
ԼՍԴ Էկրանի (17") փոխարինում նորով	7448
ԼԵԴ Էկրանի (19") փոխարինում նորով	9682
ԼՍԴ Էկրանի (19") փոխարինում նորով	9682
ԼԵԴ Էկրանի (22") փոխարինում նորով	11920
Մատրիցայի վերանորոգում	2234
Մատրիցայի փոխարինում նորով	3724
Սնուցման բլոկի վերանորոգում	2234
Սնուցման բլոկի փոխարինում նորով	3724
Վերանորոգում (վնասված մասերի փոխարինում)	2234
Ցանցային սարքավորումների	
48 տեղանոց Սվիչների վերանորոգում	7448
48 տեղանոց Սվիչների փոխարինում նորով	81924
5 տեղանոց Սվիչների վերանորոգում	1490
5 տեղանոց Սվիչների փոխարինում նորով	2979
Դյուրակիր համակարգիչների	
մայրական տպասալի նորոգում	7448
մայրական տպասալի փոխարինում նորով /ներառյալ մայր պլատան/	22343
Սնուցման բլոկի վերանորոգում	2234
Սնուցման բլոկի փոխարինում նորով ներառյալ բլոկը	5958
Օպերատիվ հիշողություն RAM DDR3 2GB -ի փոխարինում ներառյալ RAM-ը	2979
Օպերատիվ հիշողություն RAM DDR3 4GB -ի փոխարինում ներառյալ RAM-ը	5958

Կոշտ սկավառակ HDD 500GB 2.5 Inch, 7200 RPM SATA III-ի փոխարինում ներառյալ կոշտ սկավառակը	14895
Կոշտ սկավառակ HDD 1TB 2.5 Inch, 7200 RPM SATA III-ի փոխարինում ներառյալ կոշտ սկավառակը	19364
Մատրիցայի վերանորոգում	3724
Մատրիցայի փոխարինում նորով ներառյալ մատրիցան	7448
Մարտկոցի փոխարինում նորով ներառյալ մարտկոցը	8937
Լեդ էկրանի փոխարինում նորով ներառյալ Լեդ էկրանը	11916
DVD-RW փոխարինում նորով ներառյալ ԴՎԴ-ՌՎ(DVD-RW),	5958
Համակարգիչ Ամբողջը մեկում	
Լեդ էկրանի վերանորոգում	5958
Լեդ էկրանի փոխարինում ներառյալ էկրանը	14895
Մայրական սալիկի վերանորոգում	5958
Մայրական սալիկի փոխարինում ներառյալ մայրական սալիկիը	18619
Կոշտ սկավառակի փոխարինում նորով 500 գբ.	14895
Սնուցման բլոկի վերանորոգում	2979
Սնուցման բլոկի փոխարինում նորով ներառյալ բլոկը	6702
Տեսահսկման համակարգեր	
Տեսախցիկների վերանորոգում	2979
Տեսախցիկների փոխաինում նորով	10427
Տեսախցիկների սնուցման բլոկի վերանորոգում	2234
Տեսախցիկների սնուցման բլոկի փոխարինում նորով 12V/30A	18619
Տեսաձայնագրիչի վերանորոգում	7448
Տեսաձայնագրիչի փոխարինում նորով 16 տեղանոց	48410
Տեսաձայնագրիչի փոխարինում նորով 8 տեղանոց	33514
Տեսաձայնագրիչի կոշտ սկավառակի փոխարինում նորով 4Tb N*AS HDD* SATA3	48410
Տեսաձայնագրիչի կոշտ սկավառակի փոխարինում նորով 6Tb N*AS HDD* SATA3	81924
HP 3390 մոդելի լազերային տպիչի	
Քարթրիջի լիցքավորում կամ փոխարինում նորով	1490
Թմբուկի փոխարինում նորով	373
Վառարանի թերմոթաղանթի փոխարինում նորով	2979
Վառարանի նորոգում	2234
Մայր պլատաի (formator) փոխարինում նորով	14895
Մայր պլատաի (formator) նորոգում	5958
Սնուցման պլատայի փոխարինում նորով	11171
Սնուցման պլատայի վերանորոգում	5958
Վառարանի Ռետինե լիսեռի փոխարինում նորով	2979
ԱԴՖ -ի փոխարինում նորով	11171

ԱԴՖ -ի վերանորոգում	4469
Սկանեռի փոխարինում նորով	3724
Սկանեռի վերանորոգում	2234
Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով	1490
Ատամնանիվների փոխարինում նորով	2979
Դարակների վերանորոգում	2234
Canon MF 4410/4730/4870dn մոդելի լազերային տպիչի	
Քարթրիջի լիցքավորում կամ փոխարինում նորով	1490
Թմբուկի փոխարինում նորով	373
Վառարանի թերմոթաղանթի փոխարինում նորով	2979
Մայր պլատաի (formator) փոխարինում նորով	14895
Մայր պլատաի (formator) նորոգում	5958
Սնուցման պլատայի փոխարինում նորով	11171
Սնուցման պլատայի վերանորոգում	3724
Վառարանի նորոգում	2234
ԱԴՖ -ի փոխարինում նորով	11171
ԱԴՖ -ի վերանորոգում	5958
Վառարանի Ռետինե լիսեռի փոխարինում նորով	2979
Ատամնանիվների փոխարինում նորով	2979
Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով	2234
Թուղթ քաշող մեղանիզմի վերանորոգում	2234
PIXMA MG2440 Պատճենահանող սարքի	
Քարտրիջի լիցքավորում կամ փոխարինում նորով	1490
Տպիչի վերանորոգում	3724
Սքաների Լամպի փոխարինում	2234
HP OfficeJet 202 Mobile	
Տպող, Պատճենահանող սարքի	
Քարտրիջի լիցքավորում կամ փոխարինում նորով	7448
Տպիչի վերանորոգում	8937
Սքաների Լամպի փոխարինում ներառյալ լամպը	2979
Մարտկոցի փոխարինում նորով	4469
HP laserjet Mfp 127Fn/1132 Պատճենահանող սարքի	
Քարտրիջի լիցքավորում կամ փոխարինում նորով	1490
Թմբուկի փոխարինում նորով	373
Մայր պլատաի (formator) փոխարինում նորով	14895
Մայր պլատաի (formator) նորոգում	5958
Վառարանի Ռետինե լիսեռի փոխարինում նորով	2979

Վառարանի թերմոթաղանթի փոխարինում նորով	2979
Վառարանի նորոգում	3724
Ռետինե լիսեռի փոխարինում նորով	2234
Մնուցման պլատայի վերանորոգում	11171
ԱԴՖ -ի փոխարինում նորով	11171
ԱԴՖ -ի վերանորոգում	4469
Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով	2234
Ատամնանիվների փոխարինում նորով	2979
Թուղթ քաշող մեղանիզմի վերանորոգում	2234
Սքանների Լամպի փոխարինում ներառյալ լամպը	4469
HP LserJet Pro MFP M 521dn մոդելի լազերային տպիչի	
Քարթրիջի լիցքավորում կամ փոխարինում նորով	1490
Թմբուկի փոխարինում նորով	373
Վառարանի թերմոթաղանթի փոխարինում նորով	4469
Վառարանի նորոգում	3724
Մայր պլատաի (formator) փոխարինում նորով	18619
Մայր պլատաի (formator) նորոգում	5958
ԱԴՖ -ի փոխարինում նորով	11171
ԱԴՖ -ի վերանորոգում	3724
Ռետինե լիսեռի փոխարինում նորով	2234
Ատամնանիվների փոխարինում նորով	2979
Դարակների վերանորոգում	2234
Վառարանի Ռետինե լիսեռի փոխարինում նորով	5213
Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով	3724
Վառարանի տենի փոխարինում	7448
Երկկողմանի տպող մեխանիզմի վերանորոգում	2234
Մնուցման պլատայի վերանորոգում	5958
Canon MF 3010/3228 մոդելի լազերային տպիչի	
Քարթրիջի լիցքավորում կամ փոխարինում նորով	1490
Թմբուկի փոխարինում նորով	373
Վառարանի թերմոթաղանթի փոխարինում նորով	2979
Վառարանի նորոգում	2979
Ատամնանիվների փոխարինում նորով	2979
Մայր պլատայի փոխարինում (Formator)	14895
Մայր պլատաի (formator) նորոգում	5958
Վառարանի Ռետինե լիսեռի փոխարինում նորով	2979
Սկանեռի վերանորոգում	3724

Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով	2234
Մնուցման պլատայի վերանորոգում	5958
HP LserJet 1010/1018/1020 canon 2900 մոդելի լազերային տպիչի	
Քարթրիջի լիցքավորում կամ փոխարինում նորով	1490
Թմբուկի փոխարինում նորով	373
Վառարանի նորոգում կամ փոխարինում նորով	3724
Մայր պլատաի (formator) փոխարինում նորով	11171
Մայր պլատաի (formator) նորոգում	5958
Թուղթ քաշող մեղանիզմի վերանորոգում	2234
Վառարանի թերմոթաղանթի փոխարինում նորով	2979
Վառարանի Ռետինե լիսեռի փոխարինում նորով	2979
Ատամնանիվների փոխարինում նորով	2979
Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով	2234
Մնուցման պլատայի վերանորոգում	5958
RICOH SP 210/SP 150 մոդելի լազերային տպիչի	
Քարթրիջի լիցքավորում կամ փոխարինում նորով	1490
Թմբուկի փոխարինում նորով	373
Տպիչի զրոյացում	745
Մայր պլատաի (formator) նորոգում	7448
Վառարանի վերանորոգում, տեֆլոնի փոխարինում,լամպի փոխարինում, տեռմոստրի փոխարինում, ռեզինե լիսեռի փոխարինում	5213
HP laserjet mfp 630dn/631dn/637/578 մոդելի պատճենահանման սարք	
Քարտրիջի լիցքավորում կամ փոխարինում նորով	3724
Թմբուկի փոխարինում նորով	745
Մայր պլատաի (formator) փոխարինում նորով	59580
Մայր պլատաի (formator) նորոգում	8937
Վերևից քաշող մեխանիզմի (ADF) նորոգում	11171
Վառարանի թերմոթաղանթի փոխարինում նորով	11916
Վառարանի փոխարինում նորով	59580
Վառարանի նորոգում	5958
Ատամնանիվների փոխարինում նորով	2979
Թուղթ քաշող մեղանիզմի վերանորոգում	4469
Սկանեռի վերանորոգում	11171
Երկկողմանի տպող մեխանիզմի վերանորոգում	5958
Վառարանի Ռետինե լիսեռի փոխարինում նորով	14895
Վառարանի տենի փոխարինում նորով	11171
Դարակների վերանորոգում	2234

ղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով	4469
ծաչ էկրանի փոխարինում նորով	37238
Թաչ էկրանի վերանորոգում	8937
XEROX VERSALINK C7030 մոդելի պատճենահանման սարք	
Դարակների վերանորոգում	2234
Վերևից քաշող մեխանիզմի (ADF) նորոգում	11171
Թմբուկի բլոկի փոխարինում (Drum Unit)	33514
Քարթրիջի լիցքավորում կամ փոխարինում նորով / չիպի զրոյացում, կամ չիպի փոխարինում նորով	26067
Վառարանի թերմոթաղանթի փոխարինում նորով	29791
Տեֆլոնե լիսեռի փոխարինում նորով	29791
Մայր պլատաի (formator) փոխարինում նորով	89371
Մայր պլատաի (formator) նորոգում	11171
Դաչիկների փոխարինում	11171
Երկկողմանի տպող մեխանիզմի վերանորոգում	5958
Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով	7448
Հոսանքի բլոկի նորոգում	14895
Թաչ էկրանի փոխարինում նորով	37238
Թաչ էկրանի վերանորոգում	11171
HP Laserjet 1005/3010/1102/1106 լազերային տպիչի	
Քարտրիջի լիցքավորում կամ փոխարինում նորով	1490
Թմբուկի փոխարինում նորով	373
Մայր պլատաի (formator) փոխարինում նորով	14895
Մայր պլատաի (formator) նորոգում	5958
Վառարանի նորոգում	2979
Վառարանի թերմոթաղանթի փոխարինում նորով	2979
Վառարանի Ռետինե լիսեռի փոխարինում նորով	2979
Թուղթ քաշող մեղանիզմի վերանորոգում	2234
Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով	2234
Ատամնանիվների փոխարինում նորով	2979
LEXMARK E 260 DN լազերային տպիչի	
Քարթրիջի փոխարինում նորով	2979
Քարթրիջի լիցքավորում ներառյալ չիպի փոխարինում	2979
Վառարանի վերանորոգում	5958
Վառարանի փոխարինում նորով	10427
Թղթի մատուցման գլանների փոխարինում	2979
Երկկողմանի մեխանիզմի վերանորոգում	2979

...մբուկի փոխարինում	2234
Թմբուկի բլոկի փոխարինում (Drum Unit)	5958
Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով	2234
Տեֆլոնի փոխարինում նորով	8937
Հոսանքի բլոկի նորոգում	5958
Մայր պլատաի վերանորոգում	8937
Մայր պլատաի փոխարինում նորով	14895
HP Laserjet m501dn լազերային տպիչի	
Քարթրիջի լիցքավորում կամ փոխարինում նորով	1490
Թմբուկի փոխարինում նորով	373
Վառարանի վերանորոգում կամ փոխարինում նորով	5958
Հոսանքի բլոկի նորոգում	8937
Վառարանի թերմոթաղանթի փոխարինում նորով	10427
Ատամնանիվների փոխարինում նորով	2979
Երկկողմանի մեխանիզմի վերանորոգում	5958
Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով	2979
Թուղթ քաշող մեղանիզմի վերանորոգում կամ փոխարինում նորով	2234
Մայր պլատաի (formator) փոխարինում նորով	44686
Մայր պլատաի (formator) նորոգում	5958
Canon MF 3010/6030/6020/6000/211/237/Ibp 212 մոդելի լազերային տպիչի	
Քարթրիջի լիցքավորում կամ փոխարինում նորով	1490
Թմբուկի փոխարինում նորով	373
Վառարանի վերանորոգում	4469
Թղթի մատուցման գլանների փոխարինում	2234
Ատամնանիվների փոխարինում նորով	2979
Թուղթ քաշող մեղանիզմի վերանորոգում	2234
Մայր պլատաի (formator) փոխարինում նորով	14895
Մայր պլատաի (formator) նորոգում	5958
Սկանեռի վերանորոգում	11171
Վառարանի թերմոթաղանթի փոխարինում նորով	5958
Դարակների վերանորոգում	2234
HP Laserjet mfp m28w/m402/m130/m102/m15/m127 մոդելի լազերային տպիչի	
Քարթրիջի լիցքավորում կամ փոխարինում նորով	2234
Թմբուկի փոխարինում նորով	745
Վառարանի վերանորոգում	4469
Թղթի մատուցման գլանների փոխարինում նորով	3724
Ատամնանիվների փոխարինում նորով	2979

Մուտքի քաշիչ մանիպուլյատորի վերանորոգում	2234
Վառարանի թերմոթաղանթի փոխարինում նորով	5958
Մայր պլատաի (formator) փոխարինում նորով	22343
Մայր պլատաի (formator) նորոգում	5958
Սկանեռի վերանորոգում	11171
Դարակների վերանորոգում	2234
Սկաների EPSON DS-70000	
Մեխանիզմի վերանորոգում	2979
Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով	3724
Մայր պլատաի (formator) փոխարինում նորով	22343
Մայր պլատաի (formator) նորոգում	5958
Սկաների լամպի փոխարինում	11171

*** Գնացուցակը հաշվարկվել է սահմանված բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ ստացված գործակցով՝ 0.744**
****Համակարգչային սարքավորումների վերանորոգման ծառայությունները իրենց մեջ ներառում են տվյալ սարքի դիագնոստիկան և պրոֆիլակտիկա"**
***** Սարքերի և սարքավորումների տեղափոխումը իրականացնում է Կատարողը:**
******Փոխարինվող պահեստամասերը և լիցքավորման տոները տրամադրվում է Կատարողի կողմից:**
******* Քարթրիջի լիցքավորումը իրականացվում է ըստ պահանջի՝ իր ծավալի առավելագույն չափով և մեկ աշխատանքային օրվա ընթացքում:**
******** Սարքերի և սարքավորումների սպասարկումը իրականացվում է պատվիրատուի կողմից պահանջ ներկայացնելուց՝ պատվիրատուի կողմից սահմանված ժամկետում:**

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ հատուկ քննչական ծառայություն	Անուշ Պետրոսյան Ա/Ձ
ք.Երևան, Վ.Վաղարշյան 13ա	ք. Երևան, Արշակունյաց 5
Ֆին.նախ.գործառնական վարչություն	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ900011474286	Հ/Հ 1570004526880100
ՀՎՀՀ 02589128	ՀՎՀՀ 49557658
Գլխավոր քարտուղար՝	
Գ. Մկրտչյան	
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված 3
«12» հունվարի 2021թ. կնքված
ՀԲԾ-ԳՀԾՁԲ-ՀՍՊ-21/1-1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների						Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.S.

Ծառայությունն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.S.

Հավելված 3.1
«12» հունվարի 2021թ. կնքված
ՀԲԾ-ԳՀՇՁԲ-ՀՍՊ-21/1-1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն